ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՊՐՈՖԵՍՈՐ ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻՆ

Փետրվարի 15-ին Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում տեղի ունեցավ հանրապետական գիտաժողով՝ նվիրված լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանի *ծննդյան 60-ամյակին: Գիտաժողովին մասնակցում էին հանրապետության տարբեր բուհերի դասախոսներ, ակադեմիական ինստիտուտների աշխատակիցներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ, գիտության դոկտորներ, պրոֆեսորներ:*

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում, որի ռեկտորն է հոբելյարը, վերջին տարիներին գիտաժողովներ կազմակերպելու և անցկացնելու խրախուսելի ավանդույթ է ձևավորվել: Բավական է ասել, որ անցած 6 տարիների ընթացքում բուհում կազմակերպվել են տարբեր մակարդակների (միջազգային, հանրապետական, ուսանողական) շուրջ երեք տասնյակ գիտաժողովներ, իսկ պրոֆեսոր Գ. Խաչատրյանի ծննդյան 60-ամյա հոբելյանին նվիրվածը ևս յուրօրինակորեն հոբելյանական էր՝ 30-րդը:

Լիագումար նիստում լսվեց երկու զեկուցում: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆ. Աելիտա Դոլուխանյանի՝ *«Հայ-ռուսական գրական աղերսների մի ուշագրավ դրվագ» թեմայով զեկուցումը վերաբերում էր հայ-ռուսական գրական աղերսներին: Առաջին անգամ համեմատական զուգահեռներ անցկացվեցին Ա. Օստրովսկու «Անօժիտը» դրամայի հերոսուհի Լարիսայի և Գ. Սունդուկյանի «Պեպո» պիեսի հերոսուհի Կեկելի միջև՝ հանգելով հետևյալին. տարբեր ժողովուրդների գրողներ առաջ են քաշել համամարդկային այնպիսի խնդիրներ, որոնք միայն մեկ ազգի չեն վերաբերում, առաջացել են նմանատիպ պայմանականությունների մեջ:*

Լիագումար նիստում «Դիտարկումներ 5-րդ դարի հայ մատենագիրների որոշ վկայությունների վերաբերյալ» ուշագրավ զեկուցմամբ հանդես եկավ նաև ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆեսոր Լավրենտի Հովհաննիսյանը*: Զեկուցումը վերաբերում էր 5-րդ դարի մատենագիրներ Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Եզնիկ Կողբացու գործերում առկա* Շապուհ, զանդարան, խուժիկ, Զրվան *բառերի մեկնություն-բացատրություններին:*

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին լեզվաբանության և գրականագիտության մասնագիտական բաժանմունքներում, որտեղ լսվեցին հայ և համաշխարհային լեզվաբանության ու գրականագիտության

խնդիրներն արծարծող ուշագրավ զեկուցումներ, կայացավ ակտիվ քննարկում-բանավեճ: Լեզվաբանության մասնագիտական բաժանմունքում ներկայացվեցին 17 տարաբնույթ զեկուցումներ:

Բ. գ. դ., պրոֆ. Լալիկ Խաչատրյանը *«Հաղորդակցական լեզվաբանության հարցեր» թեմայով զեկուցման մեջ ժամանակակից լեզվաբանական ուղղությունների համատեքստում ներկայացրեց հաղորդակցական լեզվաբանության խնդիրները: Նշվեց, որ հաղորդակցական ակտն ըմբռնվում է որպես նշանների փոխանցում, ինչն արտացոլում է հաղորդակցվող անհատների նշանային ակտիվության ընթացքում դրսևորվող որոշակի տրամաբանական կառուցվածքներ: Այդ համատեքստում կարևորագույն խնդիր է մշակութային առարկաների նշանային հատկության ուսումնասիրությունը:*

Բ. գ. դ., պրոֆ. Թերեզա Շահվերդյանը *«Դերանվանական հոլովումը գրաբարում» զեկուցմամբ արձանագրեց գրաբարի դերանունների հոլովման մի շարք օրինաչափություններ. դերանունների մեծ մասը դերանվանական հոլովման է ենթարկվել, քանի որ սեռականում տեղի է ունեցել արմատի լրիվ կամ մասնակի փոխանցում. հայցական հոլովի ձևը նույնացել է տրականի հետ (բացառությամբ* ես-ի (ինձ, զիս*)): Նախդիրների վերացումը հայերենում հիմք դրեց մի նոր օրինաչափության. քերականական մակարդակները խառնվեցին, և ձևաբանական կարգերը սկսեցին տարբերակվել շարահյուսական մակարդակում, քանի որ առաջացան քերականական համանուններ՝ տրական՝* ինձ, քեզ, մեզ, ձեզ, *հայցական՝* ինձ, քեզ, մեզ, ձեզ: *Քերականական այս փոփոխությունը հուշում է, որ անձի և իրի առման քերականական կարգի սաղմերը պետք է փնտրել գրաբարի մեջ: Պատահական չէ, որ հայցականը նույնացել է տրականին միայն անձնական դերանունների թեք ձևերում, հետագայում լեզվական համաբանության հզոր օրենքով տարածվել է նաև անձի անունների վրա, և առկայացման կարգի մեջ տարբերակվել է անձի, իրի քերականական ենթակարգը: Դերանվանական հոլովումը ավարտվում է հայցականում: Իսկ գրաբարի բացառական, գործիական հոլովաձևերը կազմվում են անվանական հոլովման օրինաչափություններով՝ անվանական հոլովակազմիչներով [յինէն, ինեւ, ի քէն, քեւ, ի մէնջ, մեւք (մեօք), ի ձէնջ, ձեւք (ձեօք), ի սմանէ, սովաւ, յայսմ, այսու, ի սմին, սովին (սովիմբ), յումէ՞, յիմէ՞, առ իմէ՞, զմէ՞, ի՞ւ, ումամբ (ոմամբ), իւիք]: Բոլոր ձևերն էլ կազմվել են տրականի հիմքից՝* է, ւ և վ *անվանական հոլովակազմիչներով:*

Գրաբարի բայական հիմքակազմության առանձնահատկություններին էր նվիրված բ. գ. թ., դոցենտ Դավիթ Գյուլզատյանի *զեկուցումը, որտեղ հեղինակն ընդհանուր լեզվաբանական հայեցակերպով հանգում է՝ 1. համադրակազմ, 2. վերլուծակազմ, 3. և համադրակազմ, և վերլուծակազմ հիմքերի ճանաչման դրույթին:*

Բ. գ. թ., դոց. Սիլվա Պապիկյանն *անդրադարձել էր կրոնաեկեղեցական տերմինների շերտաբանական վերլուծությանը, իսկ բ. գ. թ., դոցենտ* Հայկանուշ Մեսրոպյանը՝ *նվիրապետական բարձրագույն կարգին առնչվող բառերի բարբառային բնութագրի քննությանը: Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերում տեղի ունեցած տեղաշարժերին էր վերաբերում բ. գ. թ., դոց.* Գայանե Գևորգյանի *զեկուցումը:*

Բ. գ. թ., դոց. Կարինե Առուստամյանի *««Եղբայր» հասկացույթի լեզվամշակութաբանական վերլուծությունը» զեկուցումը նվիրված էր հարազատական հարաբերություն անվանախումբ կազմող բառերի լեզվամշակութային վերլուծությանը, մասնավորապես՝ «եղբայր» հասկացույթի դրսևորմանը ժամանակակից ռուսերենում: Զեկուցողը ներկայացրեց այն դերիվացիոն շարքերը, որոնք սերված են «եղբայր» հիմքից, այդ հասկացույթի հիման վրա կազմավորված և դրանց լեզվամշակութային շարժունակությունը արտացոլող կառուցվածքները:*

Երկու աշխատանք վերաբերում էին հայերենի դարձվածների քննությանը: Բ. գ. թ., դոց. Ալբերտ Պողոսյանը *խոսեց ժամանակակից հայերենի զալ բայի դարձվածակազմական հնարավորությունների մասին՝ շեշտելով, որ, ի տարբերություն բազմաթիվ այլ բայերի, որոնք գերազանցապես ձևավորում են երկբաղադրիչ դարձվածներ, զալ բայը հավասարապես գործուն է ինչպես երկբաղադրիչ, այնպես էլ բազմաբաղադրիչ դարձվածների կազմության մեջ: Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի գիտաշխատող* Արամ Մկրյանը *ներկայացրեց գլուխ բառով դարձվածների իմաստագործառական առանձնահատկությունները իտալերենում և հայերենում:*

Զուգադրական քննության հարցեր էին արծարծված Նունե Մարիկյանի *«Հայերենի և անգլերենի հնչույթային համակարգերի ակնարկային համեմատական վերլուծություն»,* Անի Իգիթյանի *«Աստվածաշնչային-արքետիպային հենք ունեցող փոխաբերություններն ու փոխանունությունները շեքսպիրյան տեքստերում հայերեն-անգլերեն զուգադրությամբ»,* Ժաննա Ալոյանի *«Մշակույթների փոխազդեցությունը որպես երկլեզվակիրների մշակութային ինքնատիպության արտահայտություն»* և Հեղինե Սահակյանի *«Գեղարվեստական թարգմանությունը միջմշակութային հաղորդակցության տեսանկյունից» զեկուցումներում:*

Նունե Մարիկյանը քննել էր հայոց և անգլերեն լեզուների հնչույթային համակարգերին բնորոշ ընդհանրություններն ու տարբերությունները՝ ներկայացնելով անգլերենի ձայնավորների և բաղաձայնների արտաբերման ժամանակ հայերենախոսների կողմից թույլ տրվող հիմնական արտասանական սխալները:

Անի Իգիթյանը նշեց, որ աստվածաշնչյան փոխաբերություններն ու փոխանունությունները շեքսպիրյան տեքստերում մեծ մասամբ նույնական են, այսինքն՝ տրված են նույն իմաստները նույն լեզվաարտահայտչական միջոցներով, սակայն երբեմն էլ առկա են իմաստային նրբերանգների և արտահայտման կերպի տարբերություններ: Շեքսպիրյան տեքստերը հարուստ են աստվածաշնչային-արքետիպային հենք ունեցող փոխաբերություններով ու փոխանունություններով, որոնց հետազոտումը բանասիրական հերմենևտիկայի օրգանական շարունակությունը հանդիսացող լեզվաբանաստեղծական վերլուծության մեթոդով ու զուգորդական համեմատության եղանակով կարող է հանգեցնել նոր, ուշագրավ հայտնաբերումների:

Ժաննա Ալոյանը շեշտեց, որ մշակույթների և քաղաքակրթությունների երկխոսությունը ոչ միայն հաղորդակցական գործընթաց է, այլ նաև ամենաակտիվ ձևով ներթափանցում է միջմշակութային հաղորդակցման այլ գործընթացների մեջ, իսկ

այդ հաղորդակցումը իրականանալի կլինի միայն յուրաքանչյուր մշակույթի՝ մյուս մշակույթների տարբերության իրավունքի ճանաչման, այլ մշակույթների նկատմամբ հարգանք ցուցաբերելու պայմանով:

Հեղինե Սահակյանը *նշեց, որ յուրաքանչյուր թարգմանություն արտացոլում է ազգային լեզվի վիճակը զարգացման որոշակի փուլում, հասարակության գրական-գեղարվեստական նախասիրությունները և օգնում է սահմանել ու հասարակության հոգևոր ու մտավոր կյանքի պատկերը: Այս առումով վերջին թարգմանությունը դիտարկվում է որպես մշակութային երևույթ, քանի որ այն հատում է ոչ միայն լեզուների, այլև մշակույթների սահմանները: Թարգմանիչը, հանդիպելով երկու մշակույթների առանձնահատկություններին, պետք է լավ հասկանա դրանց տարբերությունները և կարողանա հնարավորինս ստույգ փոխանցել տեղեկատվությունը մի մշակույթի կրողից մյուսին:*

Հայերենի նորմավորման խնդիրները և հեռուստալրագրողների լեզվական սխալները մեկնաբանվեցին Նարինե Վարդանյանի *զեկուցման մեջ:*

Բ. գ. թ. Լիլիթ Պետրոսյանը *փորձել էր բացահայտել Գրիգոր Նարեկացու «Մատեան»-ի բաղադրյալ բառերի բարբառային ակունքները, իսկ Երևանի պետական համալսարանի դասախոս* Խաչիկ Հարությունյանը՝ *14–15-րդ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների ոճական մի քանի առանձնահատկություններ:*

Ոճագիտական խնդիրներ էին արծարծում բ. գ. թ., դոց. Աշոտ Գալստյանն *իր «Երկու հսկաները զավակների հուշերում», բ. գ. դ., պրոֆ.* Գայանե Հովհաննիսյանը *և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի գիտաշխատող* Գոհար Գրիգորյանը՝ *«Հուզագնահատողական արտահայտությունների խոսքիմասային պատկանելության հարցը հայերենում» զեկուցումներում:*

Երիտասարդ գիտնական, բ. գ. թ. Հեղինե Մելքոնյանի *զեկուցումը վեր էր հանում ժամանակակից հայերենի հնչյունական տիպաբանության հրատապ և կարևորագույն որոշ հարցեր՝ դրանց բնութագրաբանական դասատիպային քննությամբ հանդերձ:*

Խորքային հոլովների ձևավորման սկզբունքներին և, մասնավորապես, անգլերենում դրանց դասակարգման առանձնահատկություններին էր վերաբերում Լիլիթ Փարսադանյանի *զեկուցումը: Ներկայացվեցին ներլեզվաբանական և արտալեզվաբանական այն գործոնները, որոնք ազդում են խորքային հոլովների քանակի ու նշանակության վրա: Նշվեց, որ թեև տարբեր հայեցակարգերում խորքային հոլովների անվանումները համընկնում են, սակայն բովանդակության և նշանակության տեսանկյունից դրանք տարբեր են:*

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հայցորդ Ալլա Սարգսյանը *բացահայտել էր նորաբանությունների ոճական արժեքը Զորայր Խալափյանի ստեղծագործություններում, իսկ* Հասմիկ Գալստյանը *քննել էր ածանցավոր բառերի բառակազմական նշանակությունը՝ հենվելով խնդրին առնչվող տարաբնույթ տեսությունների վրա:*

Հայերենի լեզվաբանական տերմինների ստեղծման և կիրառության մի շարք կարևոր հարցեր էր քննել բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող Անահիտ Գալստյանը:



Գրականագիտության բաժանմունքում լսվեցին 10 զեկուցումներ:

Բ. գ. դ., պրոֆ. Ազատ Եղիազարյանի զեկուցումը («V դարի հայ պատմագրության մի քանի առանձնահատկություններ») հատված էր հեղինակի անտիպ աշխատությունից: Զեկուցողը կարևորում է V դարի պատմագրության բանահյուսական հիմքը, ոճական ու գաղափարական զարմանալի բազմազանությունը: Այս իմաստով «Ագաթանգեղոսի գործը արտացոլում է IV և V դդ. հայոց հոգևոր կյանքի կարևորագույն կողմերից մեկը», Փավստոսը «հինգերորդ դարի հեղինակներից ամենից շատ է մոտեցել գեղարվեստական պատումին», «Եղիշեինը խորապես գիտակցված, մտավոր բարձունքի հասած և միաժամանակ խորապես զգացմունքային հայրենասիրություն է»:

Բ. գ. դ., պրոֆ. Վանո Եղիազարյանը «Հեղինակի և պատվիրատուի զրույցը Խորենացու պատմության մեջ» զեկուցմամբ կարևորում է այդ զրույցի ծրագրային բնույթը, քանի որ Խորենացին շարադրում է՝ «հստակեցնելով իր պատմության ձևաչափը և սահմանները, ձևավորելով պատմության հիմնադրույթները»: Զրույցը բացահայտում է նաև ստեղծագործական ու կենսագրական կարգի խնդիրներ:

Բ. գ. թ., դոց. Թաղևոս Թաղևոսյանի «Կատարածաբանությունը և հերոսական ժամանակի ավարտը. նարտերի և բիլինային դյուցազունների վախճանը» զեկուցումը դիտարկում է բարոյականության անկումը և բիլինային դյուցազունների ու նարտերի աստվածամարտությունը, որ խորհրդանշում են հերոսական ժամանակի ավարտը, սակայն ակնկալվող վերջի փոխարեն հեղինակը դիտարկում է «հավերժ վերադարձի» մոդելը:

Բ. գ. դ., պրոֆ. Արմեն Պետրոսյանի «Անատոլիական մի անվան արտացոլումը հայ անվանաբանության մեջ» զեկուցումն անդրադառնում էր հայոց մեջ լուսնի պաշտամունքին, որ դրսևորվել է Արմավիրում: Արմավիր անվան մեկնությունը, ըստ հեղինակի, կարող է հնագույն ծագում ունենալ և կապվել խեթերեն հիմքերի հետ՝ arma - «լուսին, լուսնաստված» + pir «տուն», կրոնական ոլորտում՝ «աստծո տուն, տաճար»: Հնարավոր է, որ հայոց նախապետներից չորսի անունները՝ Ար(ա)մանեակ, Ար(ա)մայիս, Արամ, Հարմա, նույնպես կապվում են խեթալուվիական Armas «լուսին, աստված» անվան հետ:

«Իրականության վարիացիաները Անդրեյ Բիտովի «Կապիկների սպասումը» վեպում» զեկուցման մեջ (բ. գ. թ., դոց. Էվելինա Մաթևոսյան) ուսումնասիրվում են քնի իրականությունը, կինոյի իրականությունը, կյանքի և մահի սահմանագծի իրականությունը ու կապիկների սպասման իրականությունը Ա. Բիտովի եռագրության մեջ: Քնի իրականությունը, ըստ հոդվածագրի, դրախտի փնտրտուք է, կի-

նույնը՝ խաղ, սեփական ես-ի փնտրտուք և այլն: Ներկան Բիտովի եռագրության մեջ ավելի հաճախ ներկայանում է որպես հիշողություն, իսկ անիրականը՝ խաղի կամ մոռացության պատկերի միջոցով, ընդ որում՝ իրականն ու անիրականը կապակցված են և ներկայանում են որպես եզակի միացություն:

Բ. գ. թ., դոց. Գայանե Մալումյանն *անդրադարձավ Պերճ Զեյթունցյանի «Հիսուս Նազովրեցին և նրա երկրորդ աշակերտը» և «Խոր Վիրապ» դրամաների աստվածաշնչյան ու պատմական կերպարների հեղինակային մեկնություններին, այդ կերպարների՝ արդիականության հետ ունեցած կապին:*

Բ. գ. թ., դոց. Եվա Մնացականյանի *«Թումանյանի «Բանաստեղծություններ» անդրանիկ ժողովածուի արձագանքները» զեկուցումը ներկայացնում էր ժամանակին արտահայտված կարծիքների բազմազանությունը, որով հաստատվում էր մի կարևոր ճշմարտություն. բանաստեղծի «առաջին գործերն իսկ հաստատապես խոստանում են բացել գեղարվեստի մի նոր արահետ»:*

Բ. գ. թ., դոց. Անահիտ Նահապետյանի *գիտական հետաքրքրությունների ծիրում մշտական ներկայություն է բանաստեղծ Արտաշես Հարությունյանի ստեղծագործությունը, և այս անգամ բանասերը ներկայացրեց «Բանահյուսական մտածողության որոշ դրսևորումներ Արտաշես Հարությունյանի քնարերգության մեջ» զեկուցումը: Իսկ բ. գ. թ.* Լիլիթ Փարեմուզյանն *իր «Թեոդորոս Ռշտունու և Քեռի Թորոսի կապը» զեկուցմամբ փորձեց անդրադառնալ Քեռի Թորոսի նախատիպի խնդրին:*

Բ. գ. թ., դոց. Վալերի Փիլոյանի *«Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության մեջ միֆականի կիրառության հիմնավորումը» զեկուցման մեջ որպես ելակետ են գիտակցվել Հր. Մաթևոսյանի՝ հիմնականում տեսական դիտարկումները: Մաթևոսյանի ստեղծագործության և աշխարհազգացողության մեջ առաջնային է ոչ թե միֆը՝ որպես ինքնակա իրողություն, որ կապ չունի պատմության ու կյանքի հետ, այլ կարևոր են միֆական մտածողությունն ու զգացողությունը, որ ներառում են միֆն ու կյանքը՝ նույն բանաձևման մեջ դրանց դրսևորմամբ: Եվ եթե բանաձևման մեջ դա դրսևորվում է որպես նպատակադրում, ապա գեղարվեստական երկի դեպքում այն իրացում է:*

Գիտաժողովին Սլովակիայից իր հեռակա մասնակցությունն էր բերել փիլիսոփայության դոկտոր Անտոն Ռեպոնը *«Ի. Ս. Տուրգենևի փիլիսոփայական երկխոսությունը բնության հետ» զեկուցմամբ՝ փորձելով պարզել Տուրգենևի գրականության նշանակությունն իր ժամանակի համար, բացահայտել ռոմանտիկականը սիրո փիլիսոփայության համակարգում և տուրգենևյան կերպարակերտման սկզբունքները, որոնցով իրականացվում է հեղինակային ինքնաբացահայտումը:*

Գիտաժողովին հայտեր էին ներկայացրել նաև գրականագետներ (բ. գ. դ., պրոֆ. Դավիթ Գասպարյան*, բ. գ. թեկնածուներ* Արքմենիկ Նիկողոսյան, Հրաչ Սարիբեկյան, Տարոն Դանիելյան*), ովքեր տարբեր պատճառներով ներկա չէին, սակայն նրանց զեկուցումները ևս հրատարակվել են գիտաժողովի նյութերն ամփոփող ժողովածուի մեջ:*

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
ՎԱԼԵՐԻ ՓԻԼՈՅԱՆ